

դաշտավայրը, հազիւ մէկ քանի ժամուան ճամփայ առաւ սիւնեցի հեծելագունդը՝ եւ ահա բարձանց վրայէն տեսնուեցաւ Արագածի ստորոտը երկու խումբ, որ դիմացէ դիմաց կանգնած զիրար կը դիտէին, փոքրիկ խումբը, որ ամուր դիրք մը առած էր բլրոյ մը վրայ յայտնի հայոց գունդ մ'էր, իսկ միւսը արաբացի էր իւր ճերմակ փաթոցներով: Աշոտ առանց դանդաղելու, «Երթանք, տղաք, մեր եղբարց օգնենք», գոչեց եւ ձիերը մտրակեցին դէպի բլուրը: Աշոտ առջենին սուրը խաչածեւ կը փայլեցներ, եւ ահա բոլոր խումբը շարժեցաւ ընդունելու փոքրիկ օգնութիւնը: Ինչպէս դատեր էր հեռուանց ճիշտ նոյնպէս սակաւաթիւ էր խումբը, հարիւր յիսունի չափ հետեւակ սասունցիք էին, եւ երեսունի չափ հեծեալք գրեթէ ամենքը ազնուատոհմք, քաջ եւ կորովի մարդիկ. երեք հոգի առանձին կեցած այս նորեկ ընկերաց կը նայէին դիտող աչօք, եւ այս երեք անձիւք մեզ քաջածանօթ Յովնան, Գուրգէն եւ Խոսրով էին: Երբ Աշոտ մօտեցաւ այս խմբակին սիրալիր ընդունելութիւն գտաւ, եւ Գուրգէն յայտնեց թէ իրենք յարձակելու որոշմունքն ըրած էին արդէն, բայց քիչ մը պիտի սպասէին, որ նոր եկող եղբարց ձիանքը յոգնութիւն առնեն: Սիրով ընդունեցաւ Աշոտ այս պատիւը եւ կէսժամու չափ ժամանակ ուրախ-գուարթ խօսակցելէն վերջ այս երկու հարիւր հոգին՝ հետեւակները մեջտեղնին, ձիաւորները երկու կողմէն բլուրն ի վար յարձակեցան սաստկութեամբ: Թշնամիք, որ հազար հոգիէ աւելի էին, ուրախութեան ձայներով դիմաւորեցին զիրենք, յաղթութիւնն ապահով համարելով, բայց երբ իրենց բոլոր յարձակումները անօգուտ տեսան այդ փոքրիկ հետեւակախումբին դէմ, որուն նիզակներու անտառը կը քայլեր եւ ամէն բան կը խորտակեր իւր առաջ, երբ աջ թելին վրայ Գուրգէն հսկայ հասակաւ իւր ահագին սուրը կը շարժեր տրդատաբար, եւ ամէն ընդդիմակաց կը կործաներ եւ կը տապալեր, ձախ կողմը սիւնեցիք առիծի պէս կը պատերաղմէին եւ Աշոտ՝ «Տղաք, սիւնեցիք, ձեզ տեսնեմ, ամօթով չելնենք մեր եղբարց քով», ըսելով թշնամեաց վրայ կոտորած կոտորածի կը հասցներ: Եւ վերջապէս գոհութեամբ տեսան հայք, որ արաբացի գունդը տկարացած սկսաւ քաշվիլ եւ նահանջել. ան ատեն իրենք էլ դադրեցան հալածելէն եւ տեսնելով թէ երկու միայն անկեալ ունէին եւ քանի մը թերթեւ վիրաւոր ու թշնամին երեք